

## Բաղձալի Հաշտութիւն

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բարեջան առաջնորդ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեան վերջերս Ս. Վարդան մատենաշարէն լոյս ընծայեց անգլերէնով գրքոյկ մը, որուն վերնագիրն է "A Pastoral Letter to the Armenian Faithful", որ թարգմանի «Թուղթ Հոփուական առ Հայ Հաւատացեալոց», որ հինքնին բարի տրամադրութեամբ ու ազնիւ զգացումով կատարուած երկարամեայ ցանկալի կոչ մըն է վերջ տալու Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ բացուած վէրքին ու վիհին: Այն բարի հրաւեր մըն է նաև գործածելու ներկան իբրև ոսկի պատեհութիւն՝ խօսքէն գործի անցնելու և իրականութիւն դարձնելու հայ ժողովուրդի տարիներու տենչը, իղձը և երազը՝ միութիւնը:

Մեր առաջնորդ Սրբազան Հօր գրքոյկի բովանդակութիւնը կուռ է ու խիստ այժմէական: Իսկ թելադրութիւնները՝ տրամաբանական ու համոզիչ: Բովանդակ գրքոյկը կը կարդացուի հեշտութեամբ և մեծ հաճոյքով: Ընթերցանութեան աւարտին, ընթերցողը կ'ունենայ հաճելի տպաւորութիւն և տրամադրութիւն մը, որովհետև գիրքը հեռու է անիմաստ մեղադրանքներ կատարելէ և անապատակ նետեր արձակելէ: Անոր հիմնական նպատակն է լուսաբանել ընթերցողը, և յատկապէս, անոր միտքը և էութիւնը առաջնորդել դէպի բաղձալի հաշտութիւն, միութիւն և վերջնական խաղաղութիւն:

Այստեղ, անտարակոյս, մեր նպատակը չէ ամենևին շարադրել եկեղեցական այս սուր ու վնասաբեր տագնապին տուն տուող պատճառները և ոչ ալ դոյզն չափով իսկ անդրադառնալ անոր շարժառիթներուն և այլ բաղադրական հանգամանքներուն:

Ներկայիս, հայութիւնը թևակոխած է այնպիսի փուլ մը որ կը կոչէ զմեզ ամէնքս հինքնագիտակցութեան, հինքնաքննութեան և շրջահայեցութեան: Հայ ազգային-եկեղեցական կեանքը այժմ կարիքն ունի վերագարթօնքի, վերանորոգման ու վերակազմակերպման: Ներքին միութիւնը անկասկած պիտի գայ զմեզ գօտեպնդելու և զօրացնելու մեր հոգևոր, ազգային ու մշակութային գոյատևութեան վճռակամութեան մէջ: Մեր բազմաշարժար եկեղեցին այսօր, աւելի քան երբեք, ծարաւի է հաշտ ու խաղաղ կեանքի, եկեղեցական միութեան և վարչական կառոյցի ամբողջականութեան:

Ողջ սփիւռքի և հայրենիքի հայութիւնը յուզող և մտալիկող հարցը ներկայիս միութեան ապահովումն է: Հայ եկեղեցւոյ ծոցին մէջ օրինապահութիւնը և կարգապահութիւնը վերահաստատելու հրամայականին առջև կը գտնուին ներկայ սերունդին ներկայացուցիչներն ու վերին իշխանութիւնները: Լաւատեսութեամբ տոգորուելը, միութեան զաղափարով յուսադրուելը և վարդագոյն արշալոյսներ ընդգրկելու բարի իղձերը և տրամադրութիւնները անբաւարար են միութեան գործադրման ու իրականացման համար: Հարկ է

աւելի գործել, քան խօսել :

Հետևաբար՝

Ժամանակը չէ անցեալի պատմական տխուր ու խոր անցուդարձերը վերյիշելու և մատնացոյց ընելու դէմքեր, դէպքեր ու թուականներ իբրև հիմնական դրդապատճառը բոլոր անհասկացողութեանց ու անհարկի վիճաբանութեանց :

Ժամանակը չէ կիրքերը գրգռելու, ջուրերը պղտորելու և ցեխարձակումներով գիրար նշաւակելու ու այպանելու, վասնզի բաւ է ինչ մեկն սպառեցինք և գերագոյն ճիգ գործադրեցինք գիրար մեղադրելու, անուանարկելու և նսեմացնելու :

Անցեալին թող պատկանին այլևս մոլթ, տխուր ու տրտում էջերը հայ եկեղեցւոյ տազնապալի օրերուն :

Ժամանակն է որ լուրջ, զգաստ ու խոհեմ քայլերով դիմաւորենք հրաշագեղ արշալոյսը հայ կեանքի, հարցին մօտենանք հեռատեսութեամբ, լաւատեսութեամբ և առաջնորդուինք հայ բովանդակ ազգի գերագոյն շահերով :

Ժամանակն է որ ընդմիշտ դադրեցնենք սնամէջ բանավէճերը, որոնք կուզան լոկ մեր թանկագին ժամանակը կորզելու, սքանչելի պատեհութիւնը փախցնելու, ապա և մեզ ուժաքամ ընելու, պարպելու գմեզ մեր ոգեղէն արժէքներէն, և յատկապէս մեր դարաւոր ոսոխին զուարթութիւն ու զոհունակութիւն պատճառելու և յաշս օտարաց գմեզ նշաւակ դարձնելու :

Եղաւ ժամանակ մը երբ մեր մամուլին էջերը ողողուեցան տազնապարտուող հարցերով : Մէջբերուեցան տգեղ միջադէպեր, արձանագրուեցան հայուն վարկին անվայել ու աններելի խօսքեր : Այդ բոլոր մտքի մարզանքներուն, ժամարտակութեանց ու զրպարտութեանց ժամանակն անցած է այլևս : Ժամանակն է որ մէկդի դնենք անձնական կիրքն ու մոլուցքը և գիրար հասկընանք սիրոյ ու յարգանքի հաղորդակցութեան ճանապարհով :

Այժմ, երբ այլևս համայնավար ծանր ու կործանարար թաթը վերցուած է հայոց եկեղեցիին վրայէն, և հայուն հոգին թեթեւացած ազատօրէն կը շնչէ ու կը ճախրէ զրկելու անհուն լազուարթ երկինքը :

Այժմ, երբ անաստուածեան վարչակարգը մէկընդմիշտ խորտակուած է ու անոր վարդապետութիւնը դատապարտուած յաւիտենական վախճանի ու լուութեան :

Այժմ, երբ Ղարաբաղի մեր հարազատ քոյրերն ու եղբայրները անհաւասար բայց արդար մարտ մը կը մղեն ընդդէմ ոսոխին յանուն հողային ամբողջականութեան և առհաւական արժէքներու և սրբութիւններու պահպանման :

Այժմ, երբ երկիրն հայոց, գտած իր երբեմնի ազատութիւնը և սակայն դարձած Արշակաւան քաղում աղնդաւորներու, մոլար վարդապետութիւններու և օտարոտի թիւր ուսմունքներու :

Այլևս կարելի չէ չլսել ու չանսալ մեր պապերուն ծայնին, հայրենի-

քի քաջամարտիկներուն ծայնին, մեր խղճմտանքի ծայնին ու շղառնալ մէկ ճակատ, չկազմել մէկ բոռնցք ու շունենալ մէկ նշանաբան ու նպատակակէտ:

Հայոց հողն ազատագրուած է այսօր, բայց հայոց մէկ ծանր հոգը կը մնայ դեռևս իր պարանոցին: Հայեր ամենուրեք կը զգան խիստ պահանջքը յամեցած, բայց ցանկալի միութեան:

Մայրենի երկրի վրայ տեղի ունեցած պատմական վերջին իրադարձութիւնները, և մանաւանդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթողիկոսին՝ Գարեգին Բ.-ի Ամենայն Հայոց Աթողիկոս ընտրութիւնն ու օծումը պէտք է վերջակէտ դնեն մեր եկեղեցւոյ երկփեղկման ու երկպառակտման:

Հայ իրականութենէն ներս, նորագոյն նշանակալի և ուրախալի դէպքը Մեծի Տանն Կիլիկիոյ Աթողին նոր Աթողիկոսի ընտրութիւնն էր ու օծումը: Արամ Ա. նորընտիր, պայծառամիտ ու լուսամիտ կաթողիկոսը իր պատգամներուն մէջ բազմիցս կը շեշտէ մեր մէկ եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ ազգ, մէկ մշակոյթ, մէկ ապագայ ունենալու ճշմարիտ իրողութիւնը: Իրօք որ հայ ժողովուրդը հպարտ ու գերերջանիկ պէտք է զգայ ունենալու երկու Հայրապետական Աթոռներու վրայ բազմած բարձրորակ, միջազգային շրջանակներու մէջ գերազանցապէս յարգուած, սիրուած ու գնահատուած կաթողիկոսներ: Պատիւ մեր ազգին ու եկեղեցիին որ ունին նման արժանաւոր դեկավարներ, երախտաւոր մշակներ ու հոգևոր պետեր:

Մեր մաղթանքն է ու աղերսը առ Աստուած որ Ամենաբարի Տէրը պարգևէ արեւշատութիւն գոյգ Հայրապետներուն, լիակատար առողջութիւն և բազմաբեղուն գործունէութիւն իր անդաստանէն ներս:

Հայ ազգը կը մնայ լիայոյս և աղօթող որ բաժանումի սառցահալը սկսի, ակնկալուած ու խիստ ցանկացուած միութիւնը, միացեալ ջանքերով և սերտ գործակցութեամբ, դառնայ իրականութիւն, և ի վերջոյ, մեր եկեղեցին հասնի իր բաղձալի հաշտութեան և վերագտնէ իր երբեմնի ըղձալի ու կարօտալի խաղաղութիւնը:

Այս առիթով նաև մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յղենք մեր առաջնորդ Խաժակ Սրբազան Պարսամեանին՝ զրքոյկին մէջ արտայայտած իր առողջ մտածումներուն, գաղափարներուն, քրիստոնէական մօտեցումին և սքանչելի ու օրինակելի ոգիին համար:

Զենոբ ԶԳՅ. Նալպանտեան